

focused on the social and legal significance of terrorism, which is one of the manifestations of radicalism and extremism.

**Key words:** radicalism, extremism, terrorism, rights and freedoms of citizens, legitimate interests, government, criminal code, constitution.

## ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ԻԲՐԵՎ ԱԳԱՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՄԱՄՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**Արքուր Իկիլիկյան  
Իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի դոկտորանտ**

Անհատի ազատությունը մարդկային քաղաքակրթության՝ դրա պատմական կայացման ու զարգացման տարբեր փուլերում նվաճումների հիմնական արդյունքն ու գլխավոր չափանիշն է: Համաշխարհային պատմությունը՝ իբրև ավելի ու ավելի մեծ քովզ մարդկանց դեպի առավել ազատություն շարժումը ցույց է տալիս, որ այս ազատությունը հնարավոր է միայն իբրև իրավունք, միայն իրավական ձևով, քանի որ միայն իրավունքը (իբրև համընդիմանուր, հավասար, ուստի նաև մարդկային հարաբերությունների կարգավորման, ձևականացման՝ բոլորի համար հավասարաշափ արդար ձև) անցկացնում է (և ունակ է անցկացնել) բաժանող զիջ ազատության ու կամայականության միջև, ձևափորում ու նորմավորում է ազատությունը՝ իբրև միմյանցից ազատ իրավունքի սուբյեկտների կարգավիճակ ու հարաբերություններ ընդհանուր իրավակարգի շրջանակներում (ընդհանուր իրավական նորմի գործողության պայմաններում):

Ազատության, հավասարության ու արդարության այս եռամբանության (էական նույնության) մեջ է կայանում իրավունքի՝ իբրև դրանց փոխկապակցված ու համաձայնեցված կեցության համընդիմանուր, անհրաժեշտ ու միակ ձևի ու մարդկանց հասարակական կյանքում գոյության ու արտահայտման արժեքը:

Ըստ որում, մենք ենում ենք իրավունքի ու օրենքի տարբերակման հայեցակարգից ու հենվում ենք իրավաբանական իրավաընկալման

Վրա, որը սկզբունքորեն տարբերվում է իրավունքի նկատմամբ լեզվատական և բնաիրավական մոտեցման զանազան տարբերակներից<sup>1</sup>: Ուստի իրավունքը, որի մասին խոսք է գնում մեր շարադրման մեջ, հարկավոր չէ, շփոթել տարբեր նորմատիվ ակտերի հետ՝ օրենքների, իրամանների, իրահանգների, որոշումների, նախադեպերի, պաշտոնապես լիազորված սովորույթների և այլնի հետ, մի խոսքով՝ պաշտոնապես սահմանված (այդպես կոչված՝ դրական) իրավունքի և իդեալական (քնական) իրավունքի հետ:

Օրենքներն ու պաշտոնական համապարտադիր այլ ակտերը, և այդ մասին վկայում են իրավունքի ու օրենքի հարաբերակցության հիմնախնդրի պատմությունն ու տեսությունը, կարող են լինել պաշտոնական-իշխանական ճանաչման, ինչպես իրավունքի, այնպես էլ այլ (ոչ իրավական) պահանջների, թույլատվությունների ու արգելվների նորմատիվ կոնկրետացման ու պաշտպանության ձև: Միայն իբրև իրավունքի արտահայտման ձև օրենքն ու պաշտոնավար այլ ակտերն իրենից ներկայացնում են իրավական երևույթ: Այդպիսի օրենքի շնորհիվ, իրավահավասարության սկզբունքը (և դրա հետ միասին նաև ազատության հավասար չափի համընդհանրությունը) ստանում է պետական-իշխանական, համապարտադիր ճանաչում և պաշտպանություն, ձեռք է բերում օրինական ուժ: Միայն լինելով իրավունքի հատկությունների ու պահանջների կոնկրետացում (այսինքն՝ կոնկրետ արտահայտման ձև), օրենքը դառնում է իրավական: Իրավական օրենքը հենց իրավունքն է (իր բոլոր օբյեկտիվորեն անհրաժեշտ հատկություններով հանդերձ), որը ստացավ ճանաչման, արտահայտման ու պաշտպանության պաշտոնական ձև, մի խոսքով՝ օրինական ուժ:

Իրավական օրենքը (և իրավունքի պահանջներին համապատասխանող բոլոր այլ համապարտադիր նորմերն ու նորմատիվային ակտերը)<sup>2</sup> իրավունքի համարժեք դրսնորում է՝ դրա պաշտոնական-իշխանական ճանաչվածության ու համապարտադիր որոշակիության ու կոնկրետության մեջ:

<sup>1</sup> Տվյալ հիմնախնդրի շուրջ, մասնավորապես, տե՛ս Ներսեսյան Վ.С., *Различение и соотношение права и закона как междисциплинарная проблема// Вопр. Философии права.* М., 1973. № 39-44; Նույնի՝ *Право и закон.* М., 1983; Նույնի՝ *Право, многообразие определений и единство понятия// Сов. Государство и право.* 1983, №10; Նույնի՝ *Право и закон их различие и соотношение// Вопр. Философии.* 1988, №5; Նույնի՝ *Общая теория права и государства,* М., 2014, № 53-68:

Իրավունքի ու օրենքի տարբերակման ու հարաբերակցման հայեցակարգի երկլորդմասի նպատակը կայանում է այնպիսի վիճակին ու արդյունքին հասնելու գործում, որի ժամանակ միայն իրավունքին էր տրվելու օրինական (պաշտոնական-իշխանական, համապարտադիր) ուժ և դրա հետ մեկտեղ օրենքը (և մնացած բոլոր համապարտադիր նորմերն ու ակտերը) միշտ կլիներ միայն ու միմիայն իրավական<sup>2</sup>:

Իրավական օրենքի դեպքում իրենց բնույթով օբյեկտիվ ու համանշանակական իրավունքի թվարկված արժեքներին ավելանում է դրա նոր բնույթագիրը՝ պաշտոնական համապարտադիր լինելը, ինչն էական նշանակություն ունի իրավունքի՝ իբրև հասարակական հարաբերությունների կարգավորչի, իրավակարգչի պաշտպանության համար: Սակայն այդ ժամանակ հարկավոր է ի նկատի ունենալ, որ իրավունքի պաշտոնական-իշխանական համապարտադիր լինելը՝ դրա օբյեկտիվ արժեքի հետևանքն է, այլ ոչ թե հակառակը: Պաշտոնական համապարտադրությունն ինքնին (ու դրա հետ կապված հարկադրությունը) չի ծնում ոչ իրավունք, ոչ իրավական արժեք:

Իր համընդհանուր մասշտաբով ու հավասար չափով իրավունքն արտահայտում է, չափում ու ձևավորում է հենց ազատությունը մարդկային հարաբերություններում, անհատի ազատությունը: Իրավունքի թույլտվություններն ու արգելքները հենց իրենցից ներկայացնում են մարդկային հասարակական գրյության մեջ ազատության նորմատիվային կարգն ու ձեավորվածությունը, նվաճած ազատության սահմանները, ազատության ու անզատության միջն սահմանները՝ պատմական առաջընթացի համապատասխան աստիճանին:

Մարդկությունը մինչ օրս չի հայտնագործել մարդկանց հասարակական կյանքում ազատության դրսերման որևէ այլ ձև, բացի իրավականից<sup>3</sup>:

Մարդիկ ազատ են իրենց հավասարության չափով ու հավասար՝ իրենց ազատության չափով: Ոչ իրավական ազատությունը, ազատությունն առանց համընդհանուր մասշտաբի ու միասնական չափման, մի խոսքով, այդպես կոչված, ազատությունն առանց հավասարության՝ վերնախավային արտոնությունների գաղափարախոսությունն ու փորձն է, իսկ, այդպես կոչված, հավասարությունն առանց ազատության՝ եզալիտարիզմի ու

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Հերսեսյան Բ.С., Право и правовой закон, М., 2009.

<sup>3</sup> Տե՛ս Հերսեսյան Բ.С., Современное право. Теория и методология, М., 2012. Եղ 232-233:

կոմունիզմի գաղափարախոսությունն ու փորձը (պահանջելով պատրանքային «փաստացի հավասարություն», մերժելով ձևական հավասարության իրավական սկզբունքը, հավասարությունը փոխարինելով հավասարեցմամբ և այլն): Կամ ազատությունը (իրավական ձևով), կամ կամայականությունը (դրա այս կամ այն դրսերումներով): Երրորդն այստեղ տրված չէ. անիրավությունը (և անազատությունը)՝ միշտ կամայականություն է:

Մարդկային հարաբերություններում ազատության պատմական զարգացումն իրենից ներկայացնում է մարդկանց՝ իբրև ձևականորեն (իրավաբանորեն) ազատ անձանց հավասարության առաջընթաց: Իրավունքի՝ ձևական (իրավական) հավասարության մեխանիզմի միջոցով, մարդկանց սկզբնապես անազատ զանգվածն աստիճանաբար, պատմական զարգացման ընթացքում վերափոխվում է ազատ անհատների:

Իրական կյանքը և բնության մեջ, և հասարակությունում բաղկացած է տարբերություններից: Վաղուց նկատել են, որ չկան երկու նույնական, նույնատիպ իր, առավել ևս՝ մարդ: Այս իմաստով հավասարությունը՝ որոշակի վերացականություն է, այսինքն՝ զիտակցական (մտավոր) վերացարկման արդյունք՝ այն տարբերություններից, որոնք հատուկ են հավասարվող երևույթներին: Հավասարեցումն այնտեղ, որտեղ այն տեղի է ունենում (ինչպես իրավունքում, այնպես էլ մաթեմատիկայում, որտեղ հավասարումների կազմումն ու լրտումն առանցքային դեր են խաղում), ենթադրում է, հետևաբար, հավասարեցվող օբյեկտների տարբերությունն և դրա հետ մեկտեղ այդ տարբերությունների ոչ հական լինելը (այսինքն՝ այդպիսի տարբերություններից վերացարկվելու հնարավորությունն ու անհրաժեշտությունը) այդ օբյեկտների սահմանման ու բնութագրության համապատասխան (իրավական կամ մաթեմատիկական) ձևի տեսանկյունից:

Մաթեմատիկայում հավասարությունը հասցված է մինչև որակական սահմանումների բացարձակ վերացարկմանը, լիովին «գտված է» որակական ու բովանդակային տարբերություններից: Հավասարությունն իրավունքում ոչ այնքան վերացական է, դրանում պարունակվում ու միշտ ներկա է աղցիալական ոլորտի համար հական որակական, բովանդակային առումը՝ անհատի ազատությունը հասարակական հարաբերություններում: Իրավական հավասարությունը՝ սույնեկտների հավասարություն է, մարդկանց հավասարություն հենց իբրև ազատ

անհատներ: Իրավական իմաստը՝ տարբեր կարող են լինել միայն ազատ մարդիկ, և այդ ազատությունը նշանակում է իրենց սուբյեկտների կողմից իրավունքի ճանաչում իրենց համար հավասար նորմով, որը կարգավորում է համապատասխան հարաբերությունը: Իսկ այնտեղ, որտեղ մարդիկ բաժանվում են ազատների ու անազատների, վերջինները պատկանում են իրավունքի ոչ թե սուբյեկտների, այլ օրիեկտների թվին, և իրենց նկատմամբ իրավահավասարության սկզբունքը չի կիրառվում:

Իրավահավասարությունը՝ ազատների հավասարություն է և ազատության մեջ հավասարություն, անհատների ազատության ընդհանուր մասշտաբն ու հավասար չափը: Իրավունքը խոսում ու գործում է այդպիսի հավասարության լեզվով: Այդ իմաստով իրավունքը՝ ազատության մաթեմատիկան է<sup>4</sup>: Իրավունքի ու մաթեմատիկայի հարաբերակցության տվյալ համատեքստում, հավանաբար, կարելի է ենթադրել, որ մաթեմատիկական հավասարությունը՝ իբրև տրամաբանորեն ավելի վերացական ու պատմականորեն ավելի ուշ գոյացություն, ածանցյալ է իրավահավասարության գաղափարից:

Իրավունքի պատմությունը՝ բովանդակության առաջնարաց ապրող էվոլյուցիայի պատմություն է, ձևական (իրավական) հավասարության մասշտաբի ու չափի պատմություն, պահպանելով նոյն այդ սկզբունքն իբրև իրավունքի ցանկացած համակարգի և, ընդհաննրապես, իրավունքի ունիվերսալ (համընդհանուր) սկզբունք: Մարդկային հարաբերություններում ազատության ու իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին հատուկ են ազատության սեփական մասշտաբն ու սեփական չափը, ազատության ու իրավունքի սուբյեկտների ու հարաբերությունների սեփական շրջանակը, մի խոսքով՝ ձևական (իրավական) հավասարության սկզբունքի սեփական բովանդակությունը: Ուստի ձևական հավասարության սկզբունքն իրենից ներկայացնում է իրավունքին մշտական հատուկ սկզբունք՝ պատմականորեն փոփոխվող բովանդակությամբ:

Ընդհանուր առմամբ, ձևական հավասարության սկզբունքի բովանդակության, ծավալի, գործողության ոլորտի պատմական զարգացումը չի մերժում, այլ ընդհակառակը, ամրապնդում է տվյալ սկզբունքի արժեքը (այն կոնկրետացնող նորմերի համակարգում): Իբրև

<sup>4</sup> Սակրամասն տէ՛ս Հերսեսյան Բ.С., Право - математика свободы, М., 1996.

իրավունքի տարբերակից առանձնահատկություն՝ սոցիալական կարգավորման այլ տեսակների հետ դրա հարաբերակցության ու տարածայնության մեջ (բարոյական, կրոնական և այլն): Հաշվի առնելով դա՝ կարելի է ասել, որ իրավունքը՝ հասարակական հարաբերություններում մարդկանց ձեական հավասարության սկզբունքի միջոցով ազատության դրսնորման նորմատիվային ձև է:

Հավասարության վերացական-համընդհանուր իրավական սկզբունքի տեսակետից դիտարկված (ու կարգավորված) մարդու միջև սկզբնական փաստացի տարբերությունները, արդյունքում հանդես են գալիս անհավասարության տեսքով արդեն իսկ ձեռք բերված իրավունքներում (որոնք հավասար չեն ըստ իրավունքի սուբյեկտ հանդիսացող տարբեր սուբյեկտների իրավունքների կառուցվածքի, բովանդակության ու ծավալի): Իրավունքը՝ իբրև հավասարության սկզբունքով ազատ անհատների հարաբերությունների ձև, չի ոչնչացնում (ու չի կարող ոչնչացնել) տարբեր անհատների միջև առկա սկզբնական տարբերությունները, այլ միայն ձեականացնում ու կարգավորում է այս տարբերություններն ըստ միասնական հիմքի, ձեափխում է անորոշ փաստացի ձեական տարբերությունները՝ ազատ, միմյանցից անկախ, հավասար անձնավորություններ ձեականորեն-սահմանված անհավասար իրավունքների, այսինքն՝ ազատությունը հնարավոր ու իրական է դարձնում իրավակարգի ձևով:

Տարբեր անհատների ձեականորեն հավասար ճանաչելը՝ իրենց հավասար իրավակարողության ճանաչում է, համապատասխան բարիքների, կոնկրետ օբյեկտների և այլնի նկատմամբ այս կամ այն իրավունքներ ձեռք բերելու հնարավորության ճանաչում, սակայն դա չի նշանակում կոնկրետ իրերի նկատմամբ արդեն ձեռք բերված անհատականորեն-կոնկրետ իրերի, բարիքների և այլնի նկատմամբ իրավունքների հավասարություն: Զնական իրավունքը՝ միայն իրավակարողություն է, վերացականորեն ազատ կարողություն ձեռք բերելու, ընդհանուր մասշտաբին ու իրավական կարգավորման հավասար չափին համաձայն, տվյալ օբյեկտի նկատմամբ սեփական, անհատականորեն-որոշակի իրավունքը: Տարբեր մարդկանց ձեական հավասարության ու հավասար իրավակարողության ժամանակ իրենց գործնականում ձեռք բերված իրավունքներն անխուսափելիորեն (մարդկանց, իրենց իրական հնարավորությունների, պայմանների ու կյանքի հանգամանքների միջև տարբերությունների պատճառով) կինեն

տարբեր, անհավասար, կենսական տարբերությունները, որոնք չափվում ու գնահատվում են իրավունքի հավասար մասշտաբով ու հավասար չափով, արդյունքում տալիս են տարբերություններ ձեռք բերված, կոնկրետ սուբյեկտին անձամբ պատկանող (այդ իմաստով՝ սուբյեկտիվ) իրավունքներում: Ձեռք բերված իրավունքների այդպիսի տարբերությունը տարբեր անձանց մոտ անհրաժեշտ արդյունք է հանդիսանում այդ անձանց ձևական (իրավական) հավասարության սկզբունքի, իրենց հավասար իրավակարողության հենց պահպանման, այլ ոչ թե խախտման: Ձեռք բերված իրավունքների տարբերությունը չի խախտում ու չի վերացնում ձևական (իրավական) հավասարության սկզբունքը<sup>5</sup>:

Իրավական սկզբունքի վերացական արտահայտումն ու ոյք հետ մեկտեղ այն պահպանելու պահանջը (իրավական մոտեցման անհրաժեշտությունն ու իմպերատիվությունը) ներկայացված են արդարության մեջ: Արդար է այն, ինչն արտահայտում է իրավունքը, համապատասխանում է իրավունքին ու հետևում իրավունքին: Իրավականից բացի կարգավորիչ որևէ այլ սկզբունք արդարությունը չունի: Իսկ իրավական բնույթի ու արդարության իմաստի մերժումն անխուսափելիորեն բերում է նրան, որ արդարության տեղը սկսում են տալ որևէ ոչ իրավական սկզբունք՝ հավասարեցման կամ արտոնությունների պահանջ, այս կամ այն բարոյական, աշխարհայցքային, զեղագիտական, քաղաքական, սոցիալական, ազգային, տնտեսական և այլ պատկերացումներ, շահեր և այլն: Դրանով իսկ արդարության իրավական (այսինքն՝ համընդհանուր ու բոլորի համար հավասար) նշանակությունը փոխարինվում է որոշակի, մասնավոր հետաքրքրությամբ ու կամայական բովանդակությամբ, մասնավոր հավակնություններով:

Մինչդեռ, օրինակ, սոցիալական արդարությունը՝ նույն իրավական արդարությունն է (այսինքն՝ իրավական մոտեցում, հավասարության իրավական սկզբունքի պահանջների պահպանում) սոցիալական կյանքի համապատասխան ոլորտներում ու հարաբերություններում, այլ ոչ թե որոշակի, ոչ իրավական արդարություն: Արդարությունը միշտ և ամենուրեք, ըստ էության իրավական արդարություն է: Ուստի արդարությունը կարող է բախվել միայն իրավախախտող, այլ ոչ թե իրավական օրենքի հետ, ոչ թե

<sup>5</sup>Տե՛ս Հերսեսյան Վ.С., Հայ ուրախ կ պար ու սոցիալիզմ և պատմություն. Երևան, 1992, էջ 290-291:

իրավական հավասարության ընդհանուր սկզբունքի հետ, որը հանդիսանում է դրա սեփական սկզբունքը:

Մինչդեռ, ամենուրեք բավականաշափ լայն տարածում ունեն իրավունքի ու ազատության, իրավունքի ու արդարության, իրավունքի ու հավասարության հակադիր լինելու մասին պատկերացումները: Դրանք մեծապես պայմանավորված են նրանով, որ իրավունքի տակ ի նկատի են ունենում իշխանության ցանկացած պահանջները, օրենսդրությունը, որը հաճախակի կրում է հակահրավական, կամայական, բռնի բնույթը:

Հաճախ արդարությունը հակադրվում է հավասարությանը: Ըստ որում աղավաղվում է ինչպես ազատության, այնպես է հավասարության իմաստը: Ըստ երևույթին, հավասարության տակ տվյալ դեպքերում հասկանում են այդպես կոչված սպառողական հավասարեցումը, «փաստացի հավասարությունը», որն իրենից ներկայացնում է բյուրիմացություն, հակասություն հասկացության մեջ:

Ազատությունը ոչ միայն չի հակադրվում հավասարությանը (այն է՝ իրավական հավասարությանը), այլ, ընդհակառակը, մարմնավորված է այդ հավասարության մեջ: Ազատությունն ու հավասարությունն անբաժան են ու փոխադարձաբար միմյանց ենթադրում են: Մի կողմից, ազատության՝ դրա մարդկային չափման մեջ սկզբնական ու որոշիչ կերպար է հանդիսանում ազատ անհատը՝ իրավականարողության և ընդհանուր առմամբ իրավասուբեկտության անհրաժեշտ հիմքը, մյուս կողմից, անհատների այս ազատությունը կարելի է արտահայտել միայն այդ անհատների համընդհանուր սկզբունքի ու հավասարության նորմերի միջոցով՝ իրենց փոխարարերությունների որոշակի ոլորտում ու ձևում: Իրավունքը՝ ոչ թե պարզապես համընդհանուր մասշտաբ ու հավասար չափ է, այլ համընդհանուր մասշտաբ ու հավասար չափ առաջին հերթին անհատների ազատության: Ազատ անհատները՝ իրավունքի «նյուրն» են, կրիչները, եռթյունն ու իմաստը: Այնտեղ, որտեղ մերժվում է ազատ անհատականությունը, անձը, ֆիզիկական անձի իրավական նշանակությունը, այնտեղ չկա և չի կարող լինել իրավունք (և ձևական հավասարության իրավական սկզբունք), այնտեղ չեն կարող լինել իրավունքի որևէ իսկապես իրավական անհատական և այլ (խմբային, կոլեկտիվ, ինստիտուցիոնալ և այլն) սուբյեկտներ, իսկապես իրավական օրենքներ ու իրավահարաբերություններ և ընդհանուր առմամբ հասարակության

մեջ, և հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր կոնկրետ ոլորտներում:

Պատմական իրողությունները ցույց տվեցին, որ սոցիալիզմն իր եռթյամբ՝ արմատական հակակապիտայիզմ է, և մասնավոր սեփականության (իրեն տնտեսական անհավասարության ինստիտուտի), և իրավունքի (իրեն միայն ձևական հավասարության), և ազատ, իրավական անձի, իրավունքի ու սեփականության ինքնուրույն սուբյեկտի մերժում (իրեն բուրժուայի մարմնավորում): Կուտակված տեսքով մասնավոր սեփականության (իսկ դրա հետ միասին նաև ցանկացած անհատականացված, անձամբ սահմանվող արտադրամիջոցների նկատմամբ սեփականության) հաջորդական մերժումը ներկայացված է սոցիալիստական սեփականության մեջ:

Անձի ազատությանը, անհատական սեփականությանը և իրավունքին անցում կատարելու համար անհրաժեշտ է վերափոխել ու հաղթահարել սոցիալիստական սեփականությունը, և դրա հետ մեկտեղ նաև սոցիալիզմը: Սոցիալիզմի վերափոխման իրադրության մեջ բոլոր քաղաքացիները, ըստ եռթյան, հավասար չափով ու հավասար իրավունքով սոցիալիստական սեփականության ժառանգներն են: Ուստի սոցիալիստական սեփականության վերափոխման հատունացած անհրաժեշտության միակ արդար ու պատմականորեն հեռանկարային եղանակ է հանդիսանում դրա համընդիանուր, լիարժեք ու անվճար անհատականացում՝ յուրաքանչյուր քաղաքացու ապատցիալացվող սեփականությունից հավասար բաժին, հավասար իրավունքի սկզբունքով:

«Բոլորի միասին» սոցիալիստական սեփականության վերափոխումը յուրաքանչյուրի հավասար քաղաքացիական սեփականությանը խորհրդանշում է անցում սոցիալիզմից դեպի զարգացման պատմականորեն նոր աստիճանի՝ նոր դասակարգի, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի արդեն ունենալու է ձեռք բերված, իրական ու անբաժանելի նվազագույն սեփականության իրավունքը: Դա կինդի սոցիալիստական սեփականությունից ժառանգական բաժնի բոլորի ու յուրաքանչյուրի համար բացարձակ արդար բաժին: Ըստ որում, յուրաքանչյուր քաղաքացու համար ճանաչվելու է իրեն ընդհանուր մինիմումի քաղաքացիական սեփականությունից զատ ցանկացած այլ սեփականության նկատմամբ իրավունք: Նոր, հետսոցիալիստական կարգն այդպիսի քաղաքացիական (քաղաքակրթական, ցիվլիջիտար) սեփականությամբ կարելի է, ի տարբերություն կապիտալիզմի, անվանել

ցիվիլիզմ<sup>6</sup>, ցիվիլ դասակարգ (լատիներեն «ցիվիս»՝ քաղաքացի բառից):

Քաղաքացիական սեփականության նկատմամբ անքածանելի իրավունքը՝ դա, հետևաբար, ոչ թե յուրաքանչյուր մարդու բնական իրավունք է, այլ իր իմաստով սոցիալ-քաղաքական իրավունք, կենսական անձնական, յուրաքանչյուր քաղաքացու սուբյեկտիվ իրավունք: Հենց այստեղ է, որ իրավունքը՝ հանձինս ազատության, արդարության և հավասարության, հանդես է գալիս որպես սոցիալական արժեք, որպես համընդիմանուր իրավական արժեք՝ իր եռամբասնության մեջ:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն գիտական հոդվածում, հեղինակը բացահայտում է ազատության, հավասարության և արդարության համակցության բնութագրիչ հատկանիշներն իրավունքում: Ավելին, հոդվածում ներկայացված է իրավունքի՝ իբրև արժեքային համակարգի, բնութագրիչ հատկանիշները: Մասնավորապես, հեղինակն ընդգծում է ձևական (ֆորմայ) հավասարության, սոցիալական արդարության և իրավունքի գերակայության կարևորությունը ժողովրդավարական, իրավական պետության կայացման գործընթացում:

Բանալի բառեր. իրավունք, արդարություն, ազատություն, հավասարություն, պետություն, իրավական արժեքներ:

### ПРАВО КАК СИСТЕМА ЦЕННОСТЕЙ ТРИЕДИНСТВА СВОБОДЫ, РАВЕНСТВА И СПРАВЕДЛИВОСТИ

Артур Икиликян

Кандидат юридических наук,  
докторант Института философии,  
социологии и права НАН РА

### РЕЗЮМЕ

В данной научной статье, автор раскрывает характерные черты совокупности свободы, равенства и справедливости в праве. Более того, в статье представлены характерные черты права как системы ценностей. В частности, автор подчеркивает важность формального равенства,

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս Ներսեսյան Վ. Ս. Նаш путь к праву: От социализма к цивилизму. М.. 1992:

социальной справедливости и верховенства права в процессе становления демократического, правового государства.

**Ключевые слова:** право, справедливость, свобода, равенство, государство, правовые ценности.

## LAW AS A SYSTEM OF VALUES OF THE TRINITY OF FREEDOM, EQUALITY AND JUSTICE

**Artur Ikilikyan**

*Candidate of Law,*

*Doctoral student of the Institute of Philosophy,*

*Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

In this research article, the author reveals the characteristic features of the complex of freedom, equality and justice in law. Moreover, the article presents characteristic features of law as a system of values. In particular, the author emphasizes the importance of formal equality, social justice and the rule of law in the process of establishment of democratic, legal state.

**Key words:** law, justice, freedom, equality, and your country of legal values.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ  
ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՅՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ  
ԵՐԱՇԽԻՔ ՀՀ-ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աերգել Բարիխուղարյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դրցենտ,  
Խ. Աբովյանի անվան ՀՊԱՀ

Յուրաքանչյուրի օրենքով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակությունում համարվում է մարդու և քաղաքացու ազատության կարևորագույն պայման։ Անձի իրավական պաշտպանվածության աստիճանը, ինչը երաշխավորված է դատական իշխանությամբ, հանդես է